

ՊԱՐԲԵՐՎԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԱՆՏՈՐՈՇՄԱՆ ՍՈՂԵԼԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Կ.Շահինյան

Ժամանակակից բժշկական գիտության զարգացումը նշվում է հազվագյուտ և դժվար ախտորոշվող հիվանդությունների նկատմամբ մեծացող հետաքրքրությամբ: Այդ հիվանդությունների թվին դասված է պարբերական հիվանդությունը (ՊՅ): Տարբեր հարակից հիվանդություններ (ՀՀ) նմանակում են ՊՅ-ի հիմնական ախտորոշիչ չափանիշը՝ միաժամանակյա նուպայածև գերջերմություն և շիճուկային խանգարումներ: Հաշվի առնելով ժամանակին հիվանդության բացահայտման կարևորությունը՝ արդարացված է ախտորոշման մաթեմատիկական մեթոդների կիրառումը: Բացարձակ ճիշտ ախտորոշում կատարելու հնարավորությունը դառնում է անհնար, երբ երկու կամ ավելի հիվանդությունների ախտանիշային համալիրները իրար մոտիկ են լինում: Այդ պատճառով ցանկացած հիվանդության ախտորոշումը, այդ թվում նաև ՊՅ-ի, կրում է հավանականային բնույթ: Ախտորոշման համար օգտագործված է դիսկրիմինատային անալիզի մեթոդը, որը հիմնված է Բայեսյան մոտեցման վրա [1,3]:

Յուրաքանչյուր հիվանդին համապատասխանում է դիտումների մի վեկտոր՝

$$\vec{x} = (x_1, x_2, \dots, x_p) :$$

Պահանջվում է այդ վեկտորը վերագրել կամ W_1 համախմբությանը (ՊՅ), որն ունի $N_1(\vec{\mu}_1^{p \times 1}, \Sigma^{p \times p})$ բաշխում, կամ W_2 -ին (ՀՀ), որն ունի $N_2(\vec{\mu}_2^{p \times 1}, \Sigma^{p \times p})$ բաշխում: Ընդունում ենք, որ $\vec{\mu}_1, \vec{\mu}_2$ և Σ կովարիացիայի մատրիցան հայտնի չեն: Այդ դեպքում օգտվում ենք ընտրանքներից, և եթե n_1 և n_2 ընտրանքներն անկախ են, ապա $\vec{\mu}_1$ և $\vec{\mu}_2$ կարելի է գնահատել $\vec{x}_1 = (\bar{x}_{11}, \bar{x}_{12}, \dots, \bar{x}_{1p})$ և $\vec{x}_2 = (\bar{x}_{21}, \bar{x}_{22}, \dots, \bar{x}_{2p})$ վեկտորներով, իսկ Σ -ն՝ միացված $(n_1 + n_2)$ ընտրանքային կովարիացիոն մատրիցով՝ $S = (S_{jk})_{j=1, p; k=1, p}$:

Հիվանդի ցուցանիշների չափումների արդյունքում ստացված \vec{x} վեկտորը կվերագրվի W_1 -ին, եթե

$$z = \sum_{i=1}^p a_i x_i \geq \frac{\bar{z}_1 + \bar{z}_2}{2} = c \quad (1)$$

և W_2 -ին, եթե ստանում ենք (1) պայմանի հակառակը: a_i գործակիցները՝ \bar{z}_1 -ը և \bar{z}_2 -ը, որոշվում են հետևյալ առնչություններով՝

$$\sum_{j=1}^p a_j s_{ij} = \bar{x}_{1i} - \bar{x}_{2i}, \quad i = \overline{1, p} \quad (2)$$

$$\bar{z}_i = \frac{1}{n_i} \sum_{l=1}^{n_i} z_{il}, \quad i = 1, 2; \quad (3)$$

Բայեսյան ընդհանրացված ընթացակարգի վրա հիմնված դիսկրիմինատային անալիզի ալգորիթմի կիրառման արդյունքում ստանում ենք հետևյալը՝

ա) դիսկրիմինատային ֆունկցիայի գործակիցների a_i գնահատականները;

բ) դիսկրիմինատային ֆունկցիայի Z_{il} արժեքները յուրաքանչյուր զրանցված դիտումային \vec{x}_{il} վեկտորի համար $(i = 1; 2, l = \overline{1, n_i})$;

գ) ընտրանքային \bar{z}_1 և \bar{z}_2 միջինները;

դ) Մահանաբոլիսի Δ^2 ընտրանքային հեռավորությունը:

Այս ինֆորմացիան բավական է բարձր հավաստիությամբ ՊՅ ախտորոշելու համար: Օգտվելով գրական աղբյուրներից և «Արաբկիր» մանկական կլինիկական հիվանդանոցի պրակտիկայից՝ ՊՅ-ի համար, որպես ինֆորմատիվ ցուցանիշներ ընտրված են հետևյալ մեծությունները՝ x_1 -ը՝ հեմոգլոբինն է, x_2 -ը՝ էրիտրոցիտները, x_3 -ը՝ լեյկոցիտները, x_4 -ը՝ էրիտրոցիտների նստման արագությունը, x_5 -ը՝ բիլիռուբինը, x_6 -ը՝ նետրոֆիլների քանակը, x_7 -ը՝ տրիպսինի քանակը, x_8 -ը՝ կրծքավանդակային ձևի տևողությունը, x_9 -ը՝ ստամոքսատիքային ձևի տևողությունը: Պասիվ էքսպերիմենտի միջոցով գրանցված են W_1 և W_2 երկու համախմբությունները: Ընտրանքների ծավալներն են $n_1 = n_2 = 20$: Վեկտորներ \vec{x}_1 և \vec{x}_2 -ի \bar{x}_{1j} և \bar{x}_{2j} բաղադրիչները բերված են աղյուսակներ 1-ում և 2-ում: Հավասարում (2)-ի աջ մասերի արժեքները բերված են աղյուսակ 3-ում: Հավասարում (2)-ի լուծումից ստացված արդյունքները բերված են աղյուսակ 4-ում: Որոշվել են նաև \bar{z}_1 և \bar{z}_2 միջինները՝

$$\bar{z}_1 = 0.38; \bar{z}_2 = 0.29,$$

հետևաբար $c = 0.335$: Իսկ $\Delta^2 = 0.36$:

W_1 համախմբության համար

դյուսակ 1

Ցուցանիշային միջինը	\bar{x}_{11}	\bar{x}_{12}	\bar{x}_{13}	\bar{x}_{14}	\bar{x}_{15}	\bar{x}_{16}	\bar{x}_{17}	\bar{x}_{18}	\bar{x}_{19}
Արժեքները	112.7	3.85	7.7	31.8	7.7	58.5	2.24	81.3	81.9

W_2 համախմբության համար.

Աղյուսակ 2

Ցուցանիշային միջինը	\bar{x}_{21}	\bar{x}_{22}	\bar{x}_{23}	\bar{x}_{24}	\bar{x}_{25}	\bar{x}_{26}	\bar{x}_{27}	\bar{x}_{28}	\bar{x}_{29}
Արժեքները	88.9	4.85	5.66	39.14	10.14	49.65	2.99	65.56	93.3

Աղյուսակ 3

Հաստատուններ	b_1	b_2	b_3	b_4	b_5	b_6	b_7	b_8	b_9
Արժեքները	23.8	-1.0	2.04	-7.34	-2.44	8.85	-0.75	15.74	-11.4

Աղյուսակ 4

Այս աղյուսակում հաստատունները որոշված են հավասարում (2)-ի աջ մասով:

Հաստատուններ	a_1	a_2	a_3	a_4	a_5	a_6	a_7	a_8	a_9
Արժեքները	0.4	0.3	0.15	-0.1	0.03	-0.02	0.02	0.01	-0.01

Հիվանդի տվյալները

Աղյուսակ 5

Փոփոխականներ	x_1	x_2	x_3	x_4	x_5	x_6	x_7	x_8	x_9
Արժեքները	130	3.3	12	20	8.5	63	2.3	60	50

Հիվանդության սխալ ախտորոշման հավանականությունները, երբ ապրիորի հավանականությունները և սխալի գները ընդունում ենք հավասար, որոշվում են հետևյալ արտահայտությամբ՝

$$\Pr(2/1) = \Pr(1/2) = \Phi(\Delta/2), \quad (4)$$

որտեղ $\Pr(2/1)$ -ը նշանակում է ՊՀ հիվանդության ախտորոշման հավանականությունը որպես ՀՀ հիվանդություն, իսկ $\Pr(1/2)$ -ը՝ հակառակ սխալ ախտորոշման հավանականությունը: Այս դեպքում սխալ ախտորոշման հավանականությունը կլինի՝ $\Phi(0.6) = 0.23$:

Այս հիվանդի տվյալները բերված են աղյուսակ 5-ում: Փոփոխականների արժեքները տեղադրելով (1) արտահայտության մեջ՝ ստանում ենք $z = 51.93$: Բանի որ $z > C$, հետևաբար հիվանդությունը 0.77 հավանականությամբ կարող է ախտորոշվել որպես ՊՀ և 0.23 հավանականությամբ՝ ՀՀ:

Գրականություն


1. Аствацатурян В.А., Торосян Е.Х. Периодическая болезнь у детей. - Ереван: Айастан, 1989.
2. Иберла К.С. Факторный анализ. - М.: Статистика, 1980.
3. Афуфу А.Б., Эўзен С.Г. Статистический анализ. Подход с использованием ЭВМ. - М.: Мур, 1982.

ԲԱԿՅ-ԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՃՇՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՀԱՄԵՍԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ա. Չիլինգարյան

Գործնականում մեծ հետաքրքրություն են ներկայացնում բազմաչափ ավտոմատ կառավարման համակարգերի (ԲԱԿՅ) անալիզի և սինթեզի մեթոդները, երբ վերջիններս գտնվում են պատահական ազդեցությունների ներքո: Պատահական կառավարման տեսության համապատասխան մեթոդների ուղղակի ընդհանրացումը ԲԱԿՅ-ի համար իր հետ բերում է մեծ դժվարություններ: Այդ պատճառով, ԲԱԿՅ-ի վերլուծության դեպքում անհրաժեշտ են նոր մոտեցումներ, որոնք հաշվի

կառնեն վերջիններիս առանձնահատկությունները և միևնույն ժամանակ սերտ կապի մեջ կլինեն դասական ճարտարագիտական մեթոդների հետ: Դիտարկենք ընդհանուր տեսքի N մուտքերով և N ելքերով գծային կայուն ԲԱԿՅ (Նկ.1).



Նկ.1 Գծային ԲԱԿՅ-ի մատրիցային կառուցվածքային սխեմա

Հայտնի է, որ այս համակարգի ելքային $f(t)$ վեկտորի P_f կովարիացիաների մատրիցը $\Phi(t)$ մուտքային վեկտորի տրված $S_\Phi(j\omega)$ սպեկտրալ խտությունների մատրիցի դեպքում որոշվում է հետևյալ ձևով [3].

$$P_f = \frac{1}{2\pi} \int_{-\infty}^{+\infty} S_f(\omega) d\omega = \frac{1}{2\pi} \int_{-\infty}^{+\infty} \Phi(j\omega) S_\Phi(\omega) \Phi^T(j\omega) d\omega, \quad (1)$$

որտեղ $\Phi(j\omega)$ -ն և $\Phi^T(j\omega)$ -ն, համապատասխանաբար, փակ ԲԱԿՅ-ի ըստ ելքի փոխանցման մատրիցի կոմպլեքս համալուծ և տրանսպոնացված մատրիցներն են:

Ընդունենք, որ $\Phi(t)$ -ն պատահական վրդովմունքների վեկտոր է: Այս դեպքում P_f կովարիացիաների մատրիցի միջոցով կարելի է գաղափար կազմել ԲԱԿՅ-ի վիճակագրական ճշտության մասին: Սակայն, եթե հաշվի առնենք, որ (1) արտահայտության մեջ ինտեգրալի նշանի տակ գտնվում են $N \times N$ չափողականությամբ ֆունկցիոնալ մատրիցներ, ապա մեծ N -երի համար և բարձր կարգի համակարգերի դեպքում (1) բանաձևով P_f -ի հաշվարկը կապված է մեծ դժվարությունների հետ: Այդ դժվարությունները որոշ չափով կարելի է շրջանցել, եթե օգտվենք գաուսյան մարկովյան պատահական գործընթացների տեսության վրա հիմնված P_f -ի հաշվարկի մեթոդից [1]: Այս մեթոդի կիրառման ժամանակ ԲԱԿՅ-ն անհրաժեշտ է ներկայացնել վիճակի փոփոխականների տարածությունում.

$$\begin{cases} \dot{x} = Ax + Bw \\ f = Cx \end{cases}, \quad (2)$$

որտեղ x -ը վիճակի փոփոխականների վեկտորն է, w -ն՝ ԲԱԿՅ-ի մուտքին կիրառված սպիտակ աղմուկի ինտենսիվությունը, f -ը՝ ելքային վեկտորը, A -ն՝ համակարգի մատրիցը, B -ն՝ կառավարող ազդանշանների մատրիցը, իսկ C -ն՝ չափումների բաղադրակազմի մատրիցը:


Այս դեպքում x վիճակի փոփոխականների վեկտորի համար P_x կովարիացիաների մատրիցը կարելի է որոշել Լյապունովի հետևյալ հավասարումով.

$$AP_x + P_x A^T + BwB^T = 0: \quad (3)$$

Այնուհետև ելքային վեկտորի համար կունենանք՝

$$P_f = CP_x C^T: \quad (4)$$

Եթե համակարգի մուտքի ՎՈՒ ազդում է $S_w(j\omega)$ սպեկտրալ խտությունների մատրիցով բնութագրվող պատահական ազդանշան, ապա համակարգի մուտքին անհրաժեշտ է ավելացնել ձևավորող գտիչ (Նկ. 2): Այդ դեպքում (2) հավասարումը պետք է նկարագրի ԲԱԿՅ-ը՝ գտիչի հետ միասին.



ևկ 2 զԲԿ-ն գտիչի հետ միասին

քում անհրաժեշտ է նկատի ունենալ N հատ $P_{f_{ii}} (i = \overline{1, N})$ դիսպերսիաները (P_f մատրիցի անկյունագծային էլեմենտները) և ԲԱԿ-ի ելքային փոփոխականների $N(N-1)/2$ հատ ($P_{f_{ik}} = P_{f_{ki}}; i, k = \overline{1, N}$) փոխադարձ կոռելյացիոն մոմենտները: Որպես որակի գնահատական P_f մատրիցի անհարմարությունն ի հայտ է գալիս հատկապես մի քանի ԲԱԿ-երը կամ միևնույն նախագծվող համակարգի առանձին տարբերակներն ըստ վիճակագրական ճշտության համեմատման դեպքում: Դա բացատրվում է նրանով, որ P_f -ի տեսքով միշտ չէ հնարավոր ԲԱԿ-ի վիճակագրական ճշտության վերաբերյալ տալ միարժեք գնահատական: Այդ պատճառով հողվածում [2] առաջարկվել է ԲԱԿ-երի վիճակագրական ճշտությունը գնահատել սկալյար գնահատականով: Որպես այդպիսին ընդունվել է ելքային վեկտորի մոդուլի դիսպերսիան σ^2 (կամ σ միջին քառակուսային շեղումը):

$$\sigma^2 = M \left[\sum_{i=1}^n f_i^2(t) \right] = \sum_{i=1}^n M [f_i^2(t)] = \text{tr} \{ P_f \}, \quad (5)$$

որտեղ M -ը մաթսպասման սիմվոլն է, իսկ $\text{tr} \{ P_f \}$ -ը՝ P_f մատրիցի հետքը:

Այդ գնահատականի համար դուրս է բերվել հետևյալ անհավասարությունը.

$$\sigma^2 \leq \frac{1}{2\pi} \int_{-\infty}^{+\infty} \|\Phi(j\omega)\|_{\infty}^2 \|S_{\varphi}(j\omega)\|_{\infty}^2 d\omega, \quad (6)$$

որտեղ $\|\Phi(j\omega)\|_{\infty}$ -ը և $\|S_{\varphi}(j\omega)\|_{\infty}$ -ը, համապատասխանաբար, փակ համակարգի ըստ ելքի փոխանցման մատրիցի և մուտքային ազդանշանի սպեկտրալ խտությունների մատրիցի Շմիդտի նորմաներն են: Ստացված բանաձևը բավականին պարզ է և հնարավորություն է տալիս հաշվարկել σ^2 -ն առանց գտնելու P_f մատրիցը: Ընդ որում, հողվածում ցույց է տրվել, որ $S_{\varphi}(\omega) = S_{\varphi}(\omega)I$ -ի դեպքում (6) անհավասարությունը դառնում է խիստ հավասարություն, որի դեպքում որոշվում է σ^2 -ի ճշգրիտ արժեքը: Նշենք նաև, որ $N=1$ -ի դեպքում ստացված արտահայտությունը համընկնում է դասական տեսությունից հայտնի բանաձևին.

$$\sigma^2 = \frac{1}{2\pi} \int_{-\infty}^{+\infty} |\Phi(j\omega)|^2 S_{\varphi}(\omega) d\omega: \quad (7)$$

Դիտարկենք երկու հենակետային աստղերի միջոցով աստղադիտակի դիրքորոշման երկչափ համակարգը: Այդ համակարգի մատրիցային կառուցվածքային սխեմայում (նկ. 1) $Q(S)$ -ն ունի հետևյալ տեսքը.

$$Q(S) = W_{\text{comp}}(S) R W_{\text{plant}}(S),$$

որտեղ $R = \begin{bmatrix} 0.8660 & 0.5000 \\ 0.3420 & 0.9397 \end{bmatrix}$ -ը փոխադարձ կապերի մատրիցն է, $W_{\text{plant}}(S) = \frac{75000000}{s(s+25)(s+400)(s+500)}$

ը՝ օբյեկտի ուղիղ կապերի փոխանցման ֆունկցիան, $W_{\text{comp}}(S) = \frac{0.8(s+3)(s+25)}{(s+0.33)(s+400)}$ -ը՝

համակարգի յուրաքանչյուր կանալում տեղադրված կոմպենսատորների փոխանցման ֆունկցիան: Ընդունենք, որ համակարգի մուտքում գործում է միավոր ինտենսիվությամբ սպիտակ աղմուկ, և որոշենք σ^2 -ն՝ կիրառելով Covar ֆունկցիան, և այն համեմատենք (6) արտահայտությամբ հաշվարկված նույն գնահատականի հետ: Այդ նպատակով MATLAB-ի միջավայրում մշակվել է ծրագիր:

Առաջին դեպքում P_f -ի համար ստացվել է հետևյալ արդյունքը.

$$P_f = \begin{bmatrix} 4.9291 & 1.7238 \\ 1.7238 & 4.7722 \end{bmatrix}, \quad \text{որտեղից՝ } \sigma^2 = \text{tr} \{ P_f \} = 9.7014,$$

իսկ երկրորդ դեպքում ստացվել է՝ $\sigma^2 = 9.7023$:

Ստացված արդյունքները բավականին մեծ ճշտությամբ համընկնում են և կարելի է ասել, որ դրանք մոտավորապես հավասար են, ինչը և պետք է տեղի ունենա:

Եզրակացություն: Այսպիսով, առաջարկված (6) արտահայտության հիման վրա մշակված ծրագիրով հնարավոր է բավականին ճշգրիտ գնահատել ԲԱԿ-ի վիճակագրական ճշտությունը և այն կարելի է օգտագործել պատահական ազդեցությունների տակ գտնվող ԲԱԿ-երի անալիզի և սինթեզի ժամանակ: Անհրաժեշտ է նշել նաև, որ հաշվարկի տեսանկյունից առաջարկված մեթոդը առավելություն ունի MATLAB-ում օգտագործվող մեթոդի նկատմամբ: Առաջին դեպքում մենք ունենք ԲԱԿ-ի $N \times N$ չափողականությամբ փոխանցման մատրիցների նորմաներով արտահայտված սկալյար գնահատականներ, իսկ երկրորդ դեպքում փաստորեն օգտվում ենք վիճակների տարածությունից, որտեղ վիճակի փոփոխականների քանակը կարող է շատ անգամ գերազանցել N -ը, և հնարավոր է առաջանալ հաշվարկային բարդություններ:

Գրականություն

1. Брайсон А., Хо Ю-Шу. Прикладная теория оптимального управления.-М.: Мир, 1972. - 544с.
2. Гаспарян О.Н., Чилингарян А.Р. Об одной скалярной оценке статистической точности линейных многомерных систем автоматического регулирования // Моделирование, оптимизация, управление (В печати)
3. Лившиц Н.А., Виноградов В.Н., Голубев Г.А. Корреляционная теория оптимального управления многомерными процессами. -М.: Советское радио, 1974. - 328 с.

ԲԱՆԱԽՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԸՆԴՀԱՆՐԱՅՎԱԾ ՄՈԴԵԼ

Ս. Արզարյան, Է. Հակոբյան, Ս. Փափազյան

Կենսաբանության բնագավառում մինչև այժմ էլ կատարվում են փորձեր տարբեր տիպի պայմանական ռեֆլեքսների մշակման ու ամրապնդման համար: Փորձերը կատարվում են մարդկանց ու տարբեր կենդանիների նկատմամբ, որոնք շատ ժամանակ ու նյութական միջոցներ են պահանջում: Այդ երևույթների մաթեմատիկական մոդելավորումը և դրանց նմանակային (իմիտացիոն) մոդելների

ստեղծումը հնարավորություն են տալիս փորձարարներին ԷՅՍ-ի միջոցով վերարտադրել այդ փորձերը, ինչը տնտեսում է նրանց ժամանակը և նյութական միջոցները: Սողելների վրա կարելի է փորձարկել ցանկացած իրավիճակներ և պարամետրերի փոփոխություններ, մի բան, որ ոչ միշտ է հնարավոր իրականացնել կենդանի օրգանիզմների նկատմամբ:

Փորձարարական հոգեբանության կարևոր ոլորտներից է բառաուսուցումը: Շնորհիվ հիշողության՝ մարդն արտահայտում է նախկինում ընկալած երևույթները, որոնք տվյալ պահին նրա վրա չեն ազդում: Վերարտադրումը կարող է ծագել արդեն հայտնի առարկայի կամ երևույթի կրկնվող ազդեցությամբ, այս դեպքում տեղի ունի ճանաչում: Հաջորդաբար, ֆիքսված հաջորդականությամբ ուսուցման փորձերում քանակական մոդելավորման հարցերը բավականին բարդ են: Առավել պարզ էմպիրիկ պրոբլեմներ են առաջանում, երբ բառերի հաջորդականությունը ցուցակում պատահական ձևով փոխվում է: Այդ դեպքում հաջորդական էֆեկտները բացառվում են, կամ համեմայն դեպս հասցվում են միմիմունի, բայց ուսուցման բնույթը մնում է նույնը: Այդպիսի շատ փորձեր են կատարվել: Առաջարկվող մոդելը կառուցված է հենց այդ բնույթի տվյալների վերլուծության հիման վրա:

Փորձերը կատարվում են հետևյալ կերպ. փորձարկվողին բարձրաձայն կարդացվում է N միևնույն բարդությամբ չկրկնվող բառերից կազմված ցուցակ: Այնուհետև նրան առաջարկվում է գրել բոլոր բառերը, որոնք նա հիշել է: Փորձարկողը չի տալիս նրան ոչ մի ցուցում, արդյոք նա առաջադրանքը լավ է կատարել, թե՛ ոչ: Այնուհետև բառերի հաջորդականությունը պատահական ձևով փոխվում է, և ամբողջ գործընթացը կրկնվում է: Փորձը շարունակվում է նման ձևով բազմաթիվ փորձարկումների ընթացքում, մինչև հիշված բառերի քանակը համարյա հասնում է ասինպտոտային արժեքին: Այդպիսի փորձ կատարվել է 32 միևնույն բարդության բառերի հետ: Փորձը տալիս է 32 բառից յուրաքանչյուրի համար մտապահումների չիիշելու հաջորդականություն [1]:

Հիմնական ենթադրությունը, որ արվել են ստացված արդյունքների վերլուծության ժամանակ այն է, որ ցուցակի N բառերը կախված չեն մեկը մյուսից: Դա նշանակում է, որ փորձարկվողի՝ առանձին բառը հիշելու ունակությունը կախված չէ նախորդ բառերը հիշելուց կամ չհիշելուց: Գոյություն ունի ուսուցողական փորձերի մեծ բազմազանությունը հավանականային օպերատորներով նկարագրող մաթեմատիկական ապարատ, որտեղ շեշտը հիմնականում դրվում է փորձերում կենդանի օրգանիզմի վարքի առանձնահատկությունների մաթեմատիկական նկարագրման հնարավորությունների վրա:

Մաթեմատիկական մոդելն ունի հետևյալ տեսքը.

$$Q_i p = \alpha_i p + (1 - \alpha_i) \lambda_i; \quad i = 1, 2 \quad (1)$$


Գնահատվող մեծություններն են p_0 սկզբնական հավանականությունը և α_i և λ_i պարամետրերը: λ_i -ն կոչվում է Q_i օպերատորի անշարժ կետ այն նկատառումով, որ եթե $p = \lambda_i$, ապա Q_i օպերատորը այնևս p հավանականությունը չի փոխում: α_i և $(1 - \alpha_i)$ - գործակիցներ են: Եթե $0 < \alpha_i < 1$, ապա $p < Q_i p < \lambda_i$, այսինքն $Q_i p$ -ն p և λ_i մեծությունների կշռյալ միջինն է:

Ընդունում ենք, որ i - ուր բառի չիիշվելը չի փոխում նրա մշտապահման հավանականությունը հաջորդ փորձարկման ժամանակ, այսինքն՝ $\alpha_2 = 1$: Այս վարկածը հաստատվում է χ^2 չափանիշով՝ $\chi_{հաշվ}^2 = 0.72 < \chi_{տր}^2 = 2.87$: Քանի որ որոշակի փորձերից հետո բոլոր բառերը հիշվում են փորձարկվողների կողմից, ապա $\lambda_1 = 1$: Վերջնական տեսքով (1) համակարգը կունենա հետևյալ տեսքը.


$$\left. \begin{aligned} Q_1 p &= \alpha_1 p + (1 - \alpha_1) \lambda_1 \\ Q_2 p &= p \end{aligned} \right\} \quad (2)$$

որտեղ՝ $\alpha_1 = 0.856$, $\lambda_1 = 1$, $p_0 = 0.222$:

Այս փորձերում հիշողությունը "կամայական" է, ոչ իմաստային: Այսպիսի դեպքերում սովորած նյութը շատ արագ մոռացվում է, և լատենտային պարբերության վերջում հիշողությունում մնում են միայն առանձին բառեր [2]:



Նկ.1. Մոռացության կորերը (1 - էքսինհաուզի կորը)



Նկ.2. Մոռացության ապրոքսիմացված կորը

Եթե կրկին բառերը սովորելու փորձ արվի, ապա ուսուցումն ավելի արագ կընթանա, քան առաջին անգամ: Այսինքն՝ այդ դեպքում p_0 սկզբնական հիշման հավանականությունը կլինի ավելի մեծ: Այդ փաստը (2) մոդելում հաշվի առնելու համար փորձնական ճանապարհով ստացված էքսինհաուզի հիշողության կորը [2] (տես նկ.1) ապրոքսիմացնում ենք մոդելի տվյալներով հետևյալ բանաձևով.

$$p = (1 - p_0) e^{-\beta t} + p_0, \quad \beta = 0.2043 \frac{1}{\sigma} \quad (3)$$


Եթե փորձարկվողը նախկինում արդեն սովորել էր բառերը, ապա կրկին փորձ իրականացնելու դեպքում գրոյական փորձում բառերի հիշման հավանականությունը կորոշվի (3) արտահայտությամբ, կախված նրանից, թե որքան t ժամանակ է անցել բառերը սովորելուց հետո:

Այսպիսով, ստացված մոդելի օգնությամբ հնարավոր է վերարտադրել մարդկանց հետ կապված բառաուսուցման փորձերը, հաշվի առնելով մոռացության գործոնը ուսուցման գործընթացի վրա: Կարող ենք բազմաթիվ անգամ փոփոխել մոդելի պարամետրերը՝ առանց փորձարկվողի ներկայության, և պարզել, թե որ պարամետրերի դեպքում է ուսուցումն ավելի էֆեկտիվ և, որոնց դեպքում՝ ոչ այնքան էֆեկտիվ: Կարող ենք պարզել պա-

րամետրերի կրիտիկական արժեքները, որոնցից մեծի կամ փոքրի դեպքում ուսուցումն այլևս հնարավոր չէ:

Մոդելը կարող է հուշել նաև, թե որքան ժամանակ անց փորձարկվողը պետք է կրկնի սովորած նյութը (բառերը), որպիսի այն ամրապնդվի, վերհիշվի, եթե մոռացվել է, և ավելի լավ յուրացվի:

Մեքենայական փորձերն իրականացվում են Մոնտե-Կառլոյի մեթոդով: Ծրագիրը գրված է PASCAL – ով, որի բլոկ-սխեման այսպիսին է.



Նկ.3. Ծրագրի բլոկ-սխեման
Գրականություն

1. Буш Р. и Мостеллер Ф. Стохастические модели обучаемости. - М.: 1962 -С. 21-308.
2. Люблинская А. А. Детская психология. -М., 1971. -С. 200-233.

ՄՐՏԻ ՐՈՊԵԱԿԱՆ ԾԱՎԱԼԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՕՐԳԱՆԻԶՄԻ ՇՆՁԱՌԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՈՂԵԼՈՒՄ

Ա. Մխիթարյան, Տ. Պետրոսյան, Ա. Կյուրեղյան

Շնչառական համակարգում տեղի ունեցող գործընթացները, որոշակի սահմանափակումներով և ընդունելություններով, նկարագրվում են մաթեմատիկական մոդելի օգնությամբ:


Շնչառական համակարգի արտաքին և ներքին վրդովմունքների ազդեցության դեպքում մեկ հաստատված վիճակից մեկ այլ վիճակի անցման ժամանակ, ֆունկցիոնալ վիճակի փոփոխման դինամիկայի գնահատականի համար, անհրաժեշտ

է տալիս է առաջացել մշակել օրգանիզմում գազափոխանակման պրոցեսի դինամիկ մոդելը:

Առաջարկված մոդելի հիմքում ընկած են գազափոխանակման դինամիկայի նյութական բաղաձայնի հավասարումները [1-4]:

Օրգանիզմի շնչառության մոդելը նկարագրված է վիճակի տարածության մեջ՝ օգտագործելով շնչառական համակարգի մոդելավորման վերաբերյալ կուտակված փորձն ու արդյունքները [3,4]:

Շնչառական համակարգի մոդելը կարելի է ներկայացնել որպես ելքային ազդեցություններով ավտոմատ կառավարման փակ համակարգ նկ. 1՝



Նկ.1. Շնչառական համակարգի կառավարման կառուցվածքային սխեման արտահայտված հետևյալ ոչ գծային հավասարումներով [1,2]

$$\frac{dx}{dt} = \phi(x, u, f); \quad y = \psi(x), \quad (1)$$

որտեղ $x = \{x_j\} = [P_{O_2}^A, P_{CO_2}^A, C_{CO_2}^V, C_{CO_2}^T]^T$ -ը համակարգի օբյեկտի վիճակի վեկտորն է, $(j=1-4)$; $(k=1-3)$; $y = \{y_k\} = [P_{O_2}^a, P_{CO_2}^a, C_{H^+}^T]^T$ -ը՝ ելքի վեկտորը; $f = \{f_j\} = [C_{O_2}^i, C_{CO_2}^i, W]^T$ -ը՝ արտաքին վրդովմունքների վեկտորը, $(j=1-3)$. Կարգավորիչի համակարգը ս կառավարման վեկտորի համար գրենք հետևյալ մատրիցի տեսքով:

$$\frac{du}{dt} = g(\Delta y), \quad (2)$$

$$\Delta y = y_0 - y, \quad (3)$$

որտեղ $u = \{u_j\} = [F_1, F_2, F_3]^T$; $y_0 = \{y_{k0}\}$ - դրվածքների վեկտոր:

Որպես վիճակի վեկտորներ ընդունված են O_2 և CO_2 -ի կոնցենտրացիաները արվելուներում և հյուսվածքներում: Մուտքային փոփոխականներ (վրդովմունքներ) համապատասխանաբար ընդունված են O_2 և CO_2 -ի կոնցենտրացիաները օդում, և ֆիզիկական բեռը: Մոդելի ելքային փոփոխականներն են O_2 -ի և CO_2 -ի լարումները և H^+ իոնների կոնցենտրացիան զարկերակային արյան մեջ [1-5]:

Մաթեմատիկական մոդելների տեսքը կախված է մոդելավորման նպատակից և լուծվող խնդրի կարգից:

Օրգանիզմի շնչառական համակարգի մոդելավորմանը նվիրված նախկին աշխատանքներում [4,5] սրտի բուպական ծավալը նկարագրվում էր միայն թթվածնի ծախսման արագությունից և ֆիզիկական բեռից կախվածության տեսքով, որը բավարար չէր արտաքին ազդեցությունների նկարագրման համար:

Այսպիսով էֆեկտիվ գազափոխանակության համար անհրաժեշտ է նաև թոքերի տարբեր մասերում օդափոխանակության և սրտի բուպական ծավալի համապատասխանություն, հենց այս համապատասխանության խախտումն է, որ հաճախ բերում է գազափոխանակման անբավարարություն մոդելի կարգավոր-

րման փորձերի արդյունքում: Օդափոխանակության և սրտի թոպական ծավալի միջև համապատասխանությունը կոչվում է օդափոխանակային պերֆուզիոն հարաբերություն [6]:

Ելնելով վերը նշվածից մեր կողմից առաջարկում է սրտի թոպական ծավալի հաշվարկման համար օգտագործել հետևյալ պայմանը՝


$$Q_i = \begin{cases} 0,0889W + 7q_{O_2} + 3,759, W \neq 0 \\ F_A / 0,8946, W = 0 \end{cases} \quad (4)$$

որտեղ q_{O_2} -ը O_2 -ի ծախսման արագությունն է, F_A -ն՝ օդափոխանակությունը, W -ը՝ ֆիզիկական բեռը:


Օգտագործելով առաջարկված ճշգրտումը՝ իրականացված են թվային հաշվարկներ MATLAB միջավայրի ODE 23 ծրագրային փաթեթի օգնությամբ:

Իմիտացված են հետևյալ պրոցեսները՝

1. Շրջակա միջավայրում թթվածնի անվթարություն O_2 -ի 14%, ինչը համապատասխանում է ծովի մակարդակից 5500մ բարձրությանը:
2. Շրջակա միջավայրում ածխաթթու գազի պարունակության մեծացում $CO_2=5\%$: Ընդհանուր առմամբ հաշվարկային արդյունքները որակական և քանակական չափանիշներով համապատասխանում են գրականության մեջ առկա տվյալներին և փորձերին:



Նկ.2. Մոդելի պարամետրերի փոփոխման դինամիկան օդում O_2 -ի 14% պարունակության թթվածնաթափոցի դեպքում



Նկ. 3. Մոդելի պարամետրերի փոփոխման դինամիկան օդում CO_2 -ի 5% պարունակության դեպքում

Ստացված արդյունքներում օդում CO_2 -ի 5% -ի դեպքում օդափոխանակությունը և սրտի թոպական ծավալները մեծացել են 5 անգամ, ինչպես նկարագրվում է ֆիզիոլոգիայում, իսկ նախկինում կատարված աշխատանքների արդյունքում այն մեծանում էր ընդամենը 3 անգամ:

Ակնհայտ է, որ սրտի թոպական ծավալը կախված է արտաքին միջավայրի ազդեցություններից, որի հետևանքով ճշգրտվում է գազերի բաշխումը արյան համակարգում և օդափոխանակության պարամետրը:

Մնացած պարամետրերի արժեքները նույնպես բավական ճշգրտվել են

Գրականություն

1. Гродинз Ф. Теория регулирования и биологические системы.-М.: Мир, 1966. – 246с.
2. Khoo M. C. A model-based evaluation of the single-breath CO_2 ventilatory response test // J. Appl. Physiol.-1990.-V.68 (1).- P.393-399.
3. Timischl S. A Global Model for the Cardiovascular and Respiratory System Karl-Franzens University of Graz.- Austria, 1998.
4. Мхитарян А., Петросян Т., Юреган С. Сравнительный анализ математических моделей дыхательной системы организма // Студенческая юбилейная конференция ГИУА: Сб. материалов, том 1.-Ереван, 2003.- С. 189.
5. Мхитарян А. Имитация физической нагрузки на математической модели дыхательной системы организма // Моделирование, оптимизация, управление. - Ереван, 2004.-Вып.7. -Т. 2. - С. 43.
6. Уест Д. Ж. Физиология дыхания. -М.: Медицина - 1988.

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԲԵՌԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՍԻՐՏ-ԱՆՈՒՅՆ ԵՎ ՇՆՉԱՌԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԻՆՏԵՐԱՑՎԱԾ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄՈԴԵԼՈՒՄ

Ս. Կյուրեղյան, Տ. Պետրոսյան, Ա. Մխիթարյան, Մ. Զարամյան


Վերջին տարիներին ֆիզիոլոգիական համակարգերի մաթեմատիկական մոդելավորման բնագավառում լայն ուշադրություն է դարձվում ֆիզիկական բեռի ազդեցության հաշվառմանը և ֆիզիոլոգիական համակարգերի մոդելների ուսումնասիրությանը ֆիզիկական բեռնվածքի տակ: Սա պայմանավորված է մի շարք հանգամանքներով՝ արդեն գոյություն ունեն ֆիզիոլոգիական տեսանկյունից որոշակի ամբողջականություն ունեցող մոդելներ, որոնք հնարավորություն են տալիս ինտեգրացված տեսքով ներկայացնել ու հետոզոտել օրգանիզմի մի շարք համակարգերը [6,7] և դրանց վրա եղած ազդեցությունները, մարդկային գործունեության բոլոր փուլերում ֆիզիկական աշխատանքի բարեհաջող իրականացման կարևորությամբ և այդ աշխատանքին համապատասխան օրգանիզմի կարիքների սպառման անհրաժեշտությամբ [2]:

Գոյություն ունեն ֆիզիկական բեռի ներկայացման մի շարք եղանակներ, որոնք միմյանցից տարբերվում են նկարագրման մանրամասնությամբ, տարբեր համակարգերի վրա ունեցած ազդեցությամբ, ֆիզիկական բեռի ներկայացմամբ [1,6,7]: Սակայն այդ բազմազանության մեջ դեռևս չկան համընդհանուր հավանության արժանացածները՝ պայմանավորված խնդրի ներկայացման բարդությամբ և ոչ միարժեքությամբ: Այս տեսանկյունից էլ ցանկացած աշխատանք, որն իր մեջ ներառում է ֆիզիկական բեռի ներկայացման մոր մոտեցումներ կարող է որոշակիորեն լրացնել գոյություն ունեցող բացը և մյուս մեխանիզմների հետ համատեղ ներկայացմամբ առավել համընդգրկուն ցույց տալ օրգանիզմում ընթացող գործընթացները:

Մեր կողմից առաջարկված մոդելը սիրտ-անոթային և շնչառական համակարգերի ինտեգրացված տեսքով ներկայացնող մաթեմատիկական մոդել է, որում հաշվի են առնված մաս կենտրոնական նյարդային համակարգի (ԿԼՇ) և տեղային

կառավարման մի շարք մեխանիզմների ազդեցությունները [3-5]: Ինտեգրացված համակարգը, ըստ էության կառավարող համակարգի (ԿՆՀ) կառավարվող օբյեկտ է, որը սխեմատիկ տեսքով բերված նկ.1-ում: Համակարգը բաղկացած է արյան շրջանառության երկու շրջաններից և գազափոխանակության երկու տեղամասերից՝ թոքային և հյուսվածքային: Հյուսվածքային տեղամասը կախված լուծվող խնդրի դրվածքից, ներկայացվում է մի շարք գուգահեռ ճյուղերի միջոցով, որոնք արյան շրջանառության մեծ շրջանի առնաձին տեղամասեր են, և որոնց բաժանման հիմնական չափանիշը նրանցից յուրաքանչյուրում ընթացող մետաբոլիզմի տարբեր աստիճաններն են:

Ինչպես հայտնի է [2,6,7], ֆիզիկական աշխատանքի իրականացումը օրագանիզմում ուղեկցվում է հյուսվածքների կողմից լրացուցիչ O_2 -ի սպառմամբ (q_{O_2}) և CO_2 -ի արտադրությամբ: Ֆիզիկական բեռնվածքից կախված՝ արյան հոսքի փոփոխության կախվածությունների՝ մեր կողմից կատարված հետազոտությունները ցույց տվեցին, որ O_2 -ի լրացուցիչ սպառումը



Նկ. 1. Սիրտ-անոթային և շնչառական համակարգերի ինտեգրացված սխեմա


P' ՝ ճնշում (մմսնդ.սյ), R' ՝ հիդրավլիկ դիմադրություն (մմսնդ.սյ*վ*մլ⁻¹), C' ՝ ընկրկելիություն (մլ/մմսնդ.սյ), L' ՝ իներցիականություն (մմսնդ.սյ*մլ*վ⁻²), F' ՝ հոսք (մլ/ր), V_0' ՝ անոթների չլարված ծավալ (մլ), P'_{O_2} , P'_{CO_2} ՝ O_2 և CO_2 պարգիալ ճնշումները ներշնչվող օդում, W' ՝ ֆիզիկական բեռնվածքի մեծություն (վտ). ինդեքսներ՝ S և P' ՝ արյան շրջանառության մեծ ու փոքր շրջաններ, a' ՝ արտերիա, p' ՝ պերիֆերիա, A' ՝ ավելուլա, v' ՝ երակ, m' ՝ մկան, b' ՝ ուղեղ, h' ՝ սիրտ, e' ՝ արտադրություն, s' ՝ որկրային բաժին, L' ՝ ձախ փորոք, R' ՝ աջ փորոք, k' ՝ աջ փորոք կարելի է մոտարկել հետևյալ արտահայտությամբ՝

$$\frac{dq_{O_2}}{dt} = [q_{O_2,0} - q_{O_2} + k_i W_i] / T_{w_i}, \quad I = \{m, b, h, e, s\}, \quad (1)$$

որտեղ $q_{O_2,0}$ -ն տվյալ տեղամասում հանգիստ վիճակում O_2 -ի սպառման մեծությունն է, k_i -ն՝ ապորքիմացիայի գործակիցը, W_i -ն՝ ֆիզիկական բեռի մեծությունը, որը, նայած թե որ բաժնում է հաշվառվում կարող է ունենալ և տարբեր արժեքներ և տարբեր բնույթներ, T_{w_i} -ն՝ ժամանակային հաստատունը: CO_2 -ի արտադրությունն էլ ուղիղ համեմատական է O_2 -ի սպառմանը հետ R_r շնչառական գործակցի միջոցով՝

$$q_{CO_2} = R_r q_{O_2} \quad (2)$$

Մեր կողմից առայժմ ուսումնասիրվել է հյուսվածքային տեղամասի մկանային բաժինը, և առաջարկվել է մոտարկման գործակիցը ընդունել $k_m=0.0127$, իսկ ժամանակային հաստատունը՝ $T_{wm}=1-1.5$ վ., որը պայմանավորված է նրանով, որ ֆիզիկական աշխատանք իրականացնելիս մետաբոլիզմի գերակշռող մասը տեղի է ունենում մկանային բաժնում, և այստեղից էլ մենք ընդունել ենք, որ մեր մոդելում ֆիզիկական բեռի ազդեցությունը տրվում է ամֆիբալես մկանային բաժնի միջոցով: Սակայն հետագա աշխատանքներում անհրաժեշտ ենք համարում հաշվի առնել նաև ֆիզիկական բեռի ազդեցությունները մյուս բաժինների վրա:



Նկ. 2. Մոդելի պարամետրերի փոփոխությունը ֆիզիկական բեռի ազդեցության տակ.

Հիմնվելով [3-6] և ֆիզիկական բեռի (անաերոբ գործընթացները չեն դիտարկվել) ներկայացման բերված մոտեցման վրա՝ Simulink մի-ջավայրում կազմվել է վիրտուալ մոդել: Մոդելի վրա դիտարկված է $W=380$ վտ (վազը 24 կմ/ժ արագությամբ) մեծությամբ և 10ր տևողությամբ բեռի դեպքը նկ.2.:

x - կլինիկական տվյալներ բերված [6]-ում, o - կլինիկական տվյալներ բերված [1]-ում

Բեռնվածքի ազդեցության տակ միջին արտերիալ ճնշումն աճել է՝ 103 մմսնդ.սյ.ից հասնելով մինչև 125 մմսնդ.սյ.: Այս աճն ապահովում է արյան հոսքի էներգիայի աճ, որով և ապահովվում է մեծ քանակությամբ արյան հոսքը դեպի հյուսվածքներ: Հոսքերի և սիստոլիկ ճնշման աճով

պայմանավորվում է նաև թորային արտերիայում արյան ճնշման աճը, ինչը բերում է ձախ փորոքը լցնող արյան երակային ճնշման աճին: Ձախ և աջ փորոքների գործունեության հետևանքով աճում են սրտից դուրս եկող արյան հոսքերը, որոնք տվյալ դեպքում հասել են մինչև 20 լ/ր և գտնվում են կլինիկական տվյալների նորմալ տիրույթում: Ձախ և աջ փորոքների հոսքերի անցողիկ և հաստատված պրոցեսում հավասար լինելը մեկնաբանվում է վերջիններիս կարգավորող հատկություններով: Սրտի կծկումների հաճախությունը հասել է իր առավելագույնին 180 կծկ/ր [2,7]: Ավելոյար շնչառությանն աճել է՝ հասնելով մինչև 50 լ/ր, ինչը և ապահովում է թթվածնով նորմալ սնուցումը և ածխաթթու գազի հեռացումն օրգանիզմից: Արտերիալ արյան մեջ O_2 և CO_2 -ի պարզիալ ճնշումների շեղումները բավականին փոքր են, ինչը մեկնաբանում ենք տվյալ պարամետրերի կառավարվող մեծություն: Լինելու փաստով, այսինքն օրգանիզմն այնպիսի փոփոխություններ է իրականացնում, որ տվյալ մեծությունների շեղումները անվաճական արժեքներից լինեն հնարավորին չափ փոքր:

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ մշակած մոտեցումը արտացոլում է իրական օբյեկտում ֆիզիկական բեռի ազդեցության տակ ընթացող գործընթացները, ճիշտ է, տարբեր պարամետրերի նկատմամբ տարբեր ճշտության աստիճան է ցույց տալիս: Սրտի կծկումների հաճախությունների և սրտի հոսքերի մեծությունների տարբերությունը կլինիկական տվյալներից չի գերազանցում 5%: Հիդրավիկ ճնշումների շեղումները կլինիկական տվյալներից կազմում են 7-10%, նույն տիրույթում են գտնվում նաև շնչառական համակարգի պարամետրերը:

Գրականություն

1. Амосов Н. М. Теоретические исследования физиологических систем. -Киев: Наукова Думка.- 1977.
2. Амосов Н.М., Бендет Я.А. Физическая активность и сердце. -Киев: Здоровья, 1989.- 212с.
3. Мхитарян А., Петросян Т., Кюрегян С. Сравнительный анализ математических моделей дыхательной системы организма // Студенческая юбилейная конференция ГИУА: Сб. материалов. Ереван, 2003.- Т. 1.-С. 189.
4. Мхитарян А. Имитация физической нагрузки на математической модели дыхательной системы организма// Моделирование, оптимизация, управление. - Ереван, 2004.- Вып.7.-Т. 2.- С. 43
5. Петросян Т., Мхитарян А., Кюрегян С. Математическое моделирование влияния внешних воздействий на сердечно-сосудистую систему // Студенческая юбилейная конференция ГИУА: Сб. материалов, том 1.-Ереван, 2003.- С. 187
6. Magosso E., Ursino M. Cardiovascular responses to dynamic aerobic exercise: A mathematical model // J Med. Biol. Comput., V. 40, 2002, P. 660-674.
7. Timischl S. A Global Model for the Cardiovascular and Respiratory System. Karl-Franzens University of Graz.- Austria, 1998.

ՆԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԹՈԴԻ ԴԻՖԵՐԵՆՑԻԱԼ-ԹԵՅԼՈՐՅԱԼ (ԴԹ) ՆՄԱՆԱԿԸ ՈՉ ԱՎՏՈՆՈՍ ՄԱՏՐԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Օ. Կուչատյան

n -կարգանի A ավտոնոմ մատրիցների մոդուլով ամենամեծ սեփական թվերի՝ λ_1 և λ_2 , որոշման հայտնի մեթոդներից են Ֆոն-Միզեսի և λ տարբերությունների մեթոդները: Ֆոն-Միզեսի մեթոդը հնարավորություն է տալիս գտնել մոդուլով

ամենամեծ սեփական թիվը λ_1 -ը, իսկ λ -տարբերությունների մեթոդը՝ սեփական թվերի ըստ մոդուլի նվազող հաջորդականության հաջորդ անդամը՝ λ_2 -ը [1]:

Այդ թվերը որոշվում են հետևյալ առնչությունների միջոցով.

$$\bar{y}^{(0)}, \bar{y}^{(k+1)} = A \cdot \bar{y}^{(k)}, \quad k = 1, 2, \dots,$$

որտեղ $\bar{y}^{(0)} = (y_1^{(0)}, y_2^{(0)}, \dots, y_n^{(0)})^T$ -ն n -չափանի, կամայականորեն ընտրվող վեկտոր է:

Ըստ Ֆոն-Միզեսի մեթոդի

$$\lambda_{1,k+1} \approx y_i^{(k+1)} / y_i^{(k)}, \quad i = \overline{1, n}, \quad \lambda_1 = \lim_{k \rightarrow \infty} \lambda_{1,k+1}, \quad (1)$$

որտեղ $y_i^{(k)}, y_i^{(k+1)}$ -ը \bar{y} վեկտորի i -րդ տարրերն են

համապատասխանաբար k -րդ և $(k+1)$ -րդ իտերացիաներում; $\lambda_{1,k+1}$ -ը λ_1 սեփական թվի արժեքն է $(k+1)$ -րդ քայլում;

λ -տարբերությունների մեթոդը թույլ է տալիս գտնել λ_2 սեփական թիվը՝ λ_1 -ը հաշվելուց հետո:

Ըստ այս

$$\text{մեթոդի } \lambda_{2,k+1} \approx (y_i^{(k+1)} - \lambda_1 \cdot y_i^{(k)}) / (y_i^{(k)} - \lambda_1 \cdot y_i^{(k-1)}), \quad i = \overline{1, n}, \quad \lambda_2 = \lim_{k \rightarrow \infty} \lambda_{2,k+1}, \quad (2)$$

կամ

$$\lambda_2 \approx \Delta_{\lambda_1} y_i^{(k)} / \Delta_{\lambda_1} y_i^{(k-1)}, \quad (3)$$

որտեղ $y_i^{(k-1)}$ -ը \bar{y} վեկտորի i -րդ տարրն է $(k-1)$ -րդ իտերացիայում,

$\lambda_{2,k+1}$ -ը սեփական թվերի ըստ մոդուլի նվազող հաջորդականության հաջորդ անդամի մոտավոր արժեքն է $(k+1)$ -րդ քայլում, $\Delta_{\lambda_1} y^{(k)} = \bar{y}^{(k+1)} - \lambda_1 \bar{y}^{(k)}$ ($k = 0, 1, 2, \dots$)

$\bar{y}^{(k)}$ -ից λ -տարբերությունն է:

Ներկայացնենք նշված մեթոդի նմանակը ոչ ավտոնոմ համակարգերի համար՝ օգտագործելով Պուլսովի դիֆերենցիալ ձևափոխությունները [4]:

Ենթադրենք, որ $A(t)$ մատրիցի $a_{ij}(t)$, $i, j = \overline{1, n}$, տարրերն օժտված են բավարարող որոշումներ, այսինքն՝ գոյություն ունեն այդ տարրերի K -րդ կարգի ածանցյալները ($K = \overline{0, \infty}$):

Ներմուծենք հետևյալ նշանակումները (ԴԹ-պատկերները և բնօրինակները).

$$Y^{(q)}(K) \cdot \bar{y}^{(q)}(t), \quad q = \overline{1, \infty}, \quad K = \overline{0, \infty};$$

$$y_i^{(q)}(K) \cdot y_i^{(q)}(t), \quad q = \overline{1, \infty}, \quad K = \overline{0, \infty};$$

$$\lambda_1(K) \cdot \lambda_1(t), \quad q = \overline{1, \infty}, \quad K = \overline{0, \infty};$$

$$\lambda_2(K) \cdot \lambda_2(t), \quad q = \overline{1, \infty}, \quad K = \overline{0, \infty};$$

$$\lambda_1(K) \cdot \lambda_1(t), \quad K = \overline{0, \infty}; \quad \lambda_2(K) \cdot \lambda_2(t), \quad K = \overline{0, \infty};$$

